ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Սույն թվականի հոկտեմբերի 10-ին Հռոմ քաղաքում տեղի ունեցավ Հայոց Մեծ Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող խաչքարի օծման սրբազան արարողություն: Արարողությունը կատարեց Իտալիայի հայոց հոգևոր հովվության հրավերով Հռոմ ժամանած Գերմանիայի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեքչյանը: Հուշակոթողը պատրաստվել է տիար Արթուր Ասատրյանի ջանքերով: Բացման խոսքում Իտալիայի հայոց հոգևոր հովիվ Տ. Առեն վարդապետ Շահինյանը, իր երախտագիտությունը հայտնելով Իտալիայի Հանրապետության կառավարությանը և ժողովրդին, ընդգծեց. «Այս Խաչքարի տեղադրումն ու բացումը հավերժական քաղաքում խոսուն վկայությունն է հայ-իտալական բարեկամական հարաբերությունների»:

Ամենայն Հայոց Գարեգին Բ Կաթողիկոսի օրհնությունն ու բարեմաղթանքները փոխանցելով ներկաներին՝ Սրբազան Հայրը մասնավորապես նկատեց. «Մի անձի սպանությունը համարվում է ոճրագործություն, իսկ մի ողջ ժողովրդի ցեղասպանությունը մի՞թե կարող է դառնալ վիճաբանության առարկա»:

Օծման արարողությանը ներկա էին ՀՀ փոխարտգործնախարար Արմեն Բայբուրթյանը, Իտալիայում ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Ռուբեն Շուգարյանը, Իտալիայի կառավարության ներկայացուցիչներ, Լևոնյան վարժարանի տեսուչ Հովսեփ ծ. վարդապետ Քելեքյանը և բազմաթիվ հայորդիներ:

ԴԻՎԱՆ ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՅՈՑ ՀՈՎՎՈՒԹՅԱՆ